Ճարտարապետության և շինարարության
ազգային համալսարան հիմնադրամ

Քարե դռնավոր քարանձավները, որպես էթնոմշակույթային ինքնատիպ երևույթ և ՀՀ-ում տուրիզմի զարգացման գործընթացներում հրապուրիչ և հեռանկարային բաղադրիչ

Սամվել Մ. Շահինյան

ՃՇԱՀՀ Գեոէկոլոգիայի և կենսաանվտանգության ամբիոնի վարիչ
Ճարտարապետության դոկտոր
Հայաստանի անձագիտական կենտրոնի նախագահ

Քարե դռնավոր քարանձավները և գտնվելու վայրերը

Քարանձավները ընդունված է դասկարգել ըստ ծագման՝

1. Բնական
2. Մարդաստեղծ, կամ անթրոպոգեն

Բնական քարանձավները դասակարգվում են ըստ երկրաբանական ծագման՝ հրաբխային, նստվածքային և ձևափոխված ապառների մեջ Ինչպես բնական, այնպես էլ անթրոպոգեն քարանձավները բազմաթիվ ենթադասակարգումներ ունեն: Անթրոպոգեն քարանձավները իրեց գործառույթային նշանակության դասակարգվում են հետևյալ մեծ խմբերում

1. Բնակավայրեր(քաղաքներ, գյուղեր)
2. Բնակարաններ, պատսպարաններ և կացարաններ
3. Սրբազան և ծիսական վայրեր ու ստորգետնյա կառույցներ
4. Պահեստներ
5. Փարախներ և գոմեր
6. Աղավնատներ
7. Ստորգետնյա ինժեներական օժանդակ համակարգեր՝ թունելներ, ջրատարներ, գաղտնուղիներ, թակարդներ

Քարե դռնավոր քարանձավները յուրահատուկ սոցիալկան մի քանի նշանակության ճարտարագիտական կառույցներ են որոնք ծառայել են որպես պահեստներ հեղուկ և հատիկային սննդամթերքի համար, սակայն օգտագործվել են նաև որպես պատսպարան և ծիսավայր

Սրբազան և ծիսական քարանձավային հուշարձաններ Հայաստանում և Իռլանդիայում՝ Նյուգրենջի

Քրոնքի բազիլիկ եկեղեցի Քաշաթաղում

Կապադովկիա, Գյորեմ բնակավայրը



Խնձորեսկ՝ Հայաստան և Գյորեմ՝ Թուրքիա



Հայկական լեռնաշխարում անհամեմատ մեծ թիվ են կազմում քարանձավային բնակավայրերը և առանձին, տարբեր նշանակության և գործառույթների համար նախատեսված ստորգետնյա կառույցները:



Հնդևրոպական ժողովրդների բրոնզեդարյան դամբարանները հատակագծային ընդհանրություններ ունեն, քանի որ կառուցված են եղել տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումների սկզբունքների հենքով:

Քարե դռներով քարանձավները, որոնք շատ տարածված են եղել միջնադարից գրեթե մինչև մեր օրերը շահեկանորեն առանձնանում են իրեց յուրահատկություններով:



Քարե դռներով քարանձավների ծավալային, եռաչափ պատկերները





Քարե դռներով քարանձավներ կոնստրուկտիվ բաղադրիչները: Թունել և դռներ:

Քարե դռներով քարանձավներ կոնստրուկտիվ բաղադրիչները: Կարասներ և կարասանման ամբարներ:





Քարե դռներով քարանձավների վերականգնման առաջնահերթության հարցը:

- Քարե դռներով քարանձավների վերականգնման առաջնահերթությունը բացատրվում է երկու հանգամանքով

1. Ըստ Հայաստանի անձավագիտական կենտրոնի մշտադիտարկման արդյունքների քարե դռներով քարանձավները շարունակաբար և հետևողականորեն ավերվում են գանձախույզների կողմից: Այդ գործնթացները ավելի են արագացել վերջին հինգ տարիների ընթացքում:
2. Քարե դռներով քարանձավները սոսկ պահեստարաններ, կամ պատսպարաններ չեն, այլ միջնադարյան էթնոմշակույթային հարաբերությունները պարզաբանելու հրաշալի միջոց և այդ իսկ պատճառով զուգահեռաբար պետք է վերականգնել խաղողի միջնադարյան սորտերը և դարավանդային այգիները, ջրաղացը, ձիթահանքը, հայկական գլխատունը՝«հազարաշեն» գմբեթածածկով:

Քարե դռներով քարանձավների վերականգնման առաջնահերթության հարցը:

- 2003թ մայիսի վերջում, երբ երկրորդ անգամ այցելեցինք 172-48 քարանձավը, վայ-գանձախույզները տարերային և ինքնաբուխ բարբարոսությունից անցել էին պլանավորված և հետևողական ավերածության: Ներսում նոր գնված բահեր, քլունգ և այլ գործիքներ, լամպեր, բանվորական արտահագուստ, կոնսերվացված ուտելիքներ և պահածոներ կային: Ամբողջ քարանձավով հեռախոսային լարանցում էր իրականացվել և հեռախոսներ էին տեղադրվել:
- Այս ամբողջ նյութը նկարահանվել և ներկայացվել է մշակույթի նախարարության հուշարձաններով զբաղվող բաժանմունք:
- Սեպտեմբերին ՀԱԿ-ի ներկայացուցիչները նորից եղան քարանձավում: Վիճակն ավելի քան անմխիթարական էր:

Քարե դռներով քարանձավների և միջնադարյան էթնոմշակութային միջավայրի վերականգնման նախագիծը:

- Օգտվելով ՀԽՍՀ ԳԱ ԱԸ Անձավագիտական արշավախմբի գիտական հաշվետվություններից, ՀԱԿ-ի արխիվներից, մշտադիտարկման ընթացքում իրականացված նկարահանումներից և հաշվետվություններից իրականացնել հնագիտական հետազոտություններ (քանի որ ավերածությունների հետևանքում մշակույթային շերտը իսպառ ավերված է՝ պեղումները դառնում են անիմաստ) ինչպես և այլ աղբյուրներից, ստեղծել նախնական տեսքին համահունչ ճարտարապետական նախագիծ:
- Նախագծային աշխատանքների համար անհրաժեշտ է 18-ից 24 ամիս:

Քարե դռներով քարանձավների և միջնադարյան էթնոմշակութային միջավայրի վերականգնման նախագիծը:

- Գործընթացները հետևյալ հաջորդականությամբ՝

1. Տեղանքի գեոդեզիական հանույթ: Քարտեզագրական աշխատանքներ: 1:10000, 1:1000 մաշտաբներով, իսկ լոկալ խնդիրները լուծելու համար 1: 500, 1:300, 1:100: *Պատասխանատու: Համբարձումյան Պետրոս, Խուդոյան Անուշ*
2. Քարանձավագիտական հետազոտություններ: Քարանձավի և միջավայրի նկարագիրը, ապարների առանձնահատկությունները: *Պատասխանատու: Խուդոյան Անուշ*
3. Տեղանքի երկրաբանությունը և երկրաձևաբանությունը: *Պատասխանատու: Ավագյան Արա*
4. ՇՄԱԳ: ՇՄԱԳ-ի անհրաժեշտություն չկա, քանի որ քարե դռնավոր քարանձավները կարելի է նույնականացնել պահեստների հետ: Իսկ համալիրի մյուս կառույցների համար ՇՄԱԳ-ը կիրականացվի ՃՇՀԱՀ-ի ԳԷԿ ամբիոնի կողմից:
5. Հնագիտական աշխատանքներ: *Պատասխանատու: Գասպարյան Բորիս*
6. Քարանձավների ճարտարապետությունը և վերականգնման ճարտարապետական գծագրերը: *Պատասխանատու: Ենոքյան Վրույր, Նահապետյան Դավիդ, Չալիկյան Մերի*
7. Դարավանդային խաղողագործություն, միջնադարյան խաղողագործության սկզբունքներով այգու հիմնում: *Պատասխանատու: Զարուհի Մուրադյան,*
8. Քարանձավի տեղադրման վայրի նյութերին տեկտոնիկայի հետազոտություն: *Պատասխանատու:*
9. Անվտանգության և սեյսմակայունության խնդիրները: *Պատասխանատու: գնդապետ*
10. Տուրիզմի խորհրդատու:
11. Ծրագրի ղեկավար՝ ՀԱԿ:

Էթնոմշակույթային միջավայրը վերականգնելու անհրաժշտությունը

Շնորհակալություն